Ուսման հետագայ ընթացքը նրա կեանքը տասնամեակներով կապեց Էրզրումում հաստատուած Հռոմի կաթոլիկ միսիոներների՝ յիսուսեանների եւ յատկապէս՝ վեղարաւորների (կապուցիների) հետ: Լեզուական ու դաւանական կրթութիւն ստանալով վերջիններիս մօտ, ընդունելով կաթողիկէ դաւանութիւն՝ միաժամանակ երկարատեւ ծառայութեան է անցնում նրանց հաստատած առաքելական կենտրոններում՝ Կարինում, Թիֆլիսում, Գանձակում, Շամախիում, Թաւրիզում, Սպահանում եւ այլուր[4]:

1689 թ. ծնուած Եղիա Կարնեցին շատ արագ մեծ յաջողութիւնների է հասնում շարունակելով իր հօր գործունէութիւնը՝ վաճառականութիւնը: Նրա հաշուեմատեանները, որոնք սկսւում են 1713 թ., վկայում են ունեցուածքի եւ կատարուած առեւտրի մեծ ծաւալների մասին: Աւելի ուշ, թողնելով անհատական գործունէութիւնը, Եղիան, 1718-1720 թթ. Արեւելահնդկական առեւտրական ընկերութեան Թաւրիզի կառավարչի օգնականն էր եւ, ըստ էութեան, հիմնականում ինքն էր վարում ամբողջ առեւտրատնտեսական գործունէութիւնը: Դատելով պահպանուած մեծաքանակ փաստաթղթերից՝1721-1724 թթ. անհամեմատ աճում են Եղիա Կարնեցու գործունէութեան ծաւալները[5]: Միաժամանակ, հաշուի առնելով վերջինիս անձնական կարողութիւնները, ֆրանսիական կողմը նրա վրայ է սկսում դնել նաեւ որոշ դիւանագիտական առաքելութիւններ: Անձնական շփումները, ճկուն յարաբերութիւնները շահի, վեզիրի, պարսկական արքունիքի անդամների, եւրոպական դիւանագիտական առաքելութիւնների անդամների հետ վերջին դերը չխաղացին այն բանում, որ շուտով նրան յանձնարարուեց դեսպանի կարգավիճակով Ռուսաստան եւ ապա Եւրոպա տանել եւրոպական միապետերին, Հռոմի պապին եւ ռուսական իշխանութիւններին ուղղուած շահ Թահմասպի նամակները: Սակայն, Եղիային վիճակուած չէր իրագործելու այդ առաքելութիւնը: 1724 թ. Աստրախանից դէպի Մոսկուա ճանապարհին՝ Կասիմովում, Եղիան ձերբակալւում է եւ տեղափոխւում է Պետերբուրգի մօտ գտնուող Շլիսենբուրգի բերդը: Եղիա Կարնեցին, առանց դատ

կուած, միաժամանակ՝ անգլերէն թարգմանուած (տե՛ս **Hakob S. Anasian,** *The Turkish Fütüvvet and the Armenians,*- Journal of the Society for Armenian Studies, 1988-1989, vol. 4, pp. 161-181): Վերջին հայերէն հրատարակութիւնը տե՛ս **Յակոբ Անասեանի** *Թուրքական ֆութուվաթը եւ հայերը* աշխատութիւնը (տե՛ս **Յ. Անասեան,** *Մանր երկեր*, Լոս Անջելես, 1987, էջ 584-5 եւ հետագայ): Հմմտ. նաեւ *Մանր ժամանակագրութիւններ (ԺԳ-ԺԸ դդ.)*, աշխ. Վազգէն Յակոբեանի, հտ. Ա, Եր., 1951, էջ 292-296, ուր հրատարակուած է Ուրախ Գրիգոր Կարնեցու ժամանակագրութիւնը:

4 Յիշեալ քաղաքներում կաթողիկէ միսիոներական կենտրոնների հիմնադրման եւ տեղաբաշխման մասին տե՛ս **G. Hofmann S. J.** *Il vicariato apostolico di Constantinopoli. 1453-1830,* Roma, 1935; **Ambroisius Eszer,** *Misionen Randzonen der Weltgeschichte: Krim, Kaukasien ung Georgien,*- Sacra Congregationis de Propaganda Fide. Memoria rerum. 350 anni a servizio delle missioni, vol. I/1, 1622-1972, Rom-Freiburg-Wien: Herder, 1971, S. 650-679; տե՛ս նաեւ **Josef Metzler,** *Nicht erfüllte Hoffnungen in Persia* (նոյն տեղում, էջ 680-706) Արեւելքում վեղարաւորների հիմնադրման եւ նրանց գործունէութեան մասին մանրամասն տե՛ս **P. Ignazio da Seggiano,** *L'Opera del cappucini per l'unione del cristiani il secolo XVII,* Roma, 1962; տե՛ս նաեւ **Francis Richard,** *Capuchins in Persia*.- Encyclopædiae Iranica-յի էլեկտրոնային տարբերակում http://www.iranica.com/newsite/index.isc?Article=http://iranica.com/newsite/articles-/v4f8/v4f8a001.html:

5 Ռուսական արտաքին գործերի նախարարութեան դիւանում պահուող հաշուեմատեանների տուեալների համաձայն՝ 1723 թ. Եղիա Մուշեղեանի պարտատէրերի ցուցակում էին պարսկական աւագանու անդամներից շատերը, իսկ պարտքի ընդհանուր գումարը կազմում էր 3,613,000 դինար (տե՛ս **П. Т. Арутюнян,** *Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века,* Москва, 1954, с. 99-101) :